ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թ.
№ 14 (1112)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Օրակարգում անձի հոգեկան առողջության հիմնախնդիրներն էին

Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 19-21-ն անցկացվեց «Անձի հոգեկան առողջությունը. հոգեբուժության և հոգեբանության լեզուները» թեմայով միջազգային եռօրյա գիտաժողով: Այն կազմակերպվել էր Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ:

Ինչպես տեղեկացրել էինք թերթի նախորդ համարում, գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, ՌԴ-ի, Վրաստանի, ԱՄՆ-ի, Իսրայելի, Բրազիլիայի 60 առաջատար ու ճանաչված մասնագետներ, որոնց նպատակն էր քննարկել ամբողջ աշխարհում առկա անձի հոգեկան առողջության հիմնախնդիրը, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ պատերազմ, բռնություն, բռնապետական իշխանություններ, անառողջ հասարակություն և այլն:

Տարբեր երկրների առաջատար մասնագետները հավաքվել էին՝ հասկանալու՝ ի՞նչ գործոններով է պայմանավորված անձի հոգեկան առողջությունը, ինչպիսի փոխազդեցությամբ են առնչվում հոգեբանությունը, հոգեբուժությունն ու հոգեթերապիան, վերլուծելու աշխարհի պրակտիկ փորձը նոր ժամանակների և մոտեցումների համատեքստում:

Եվ պատահական չէր, որ Մանկավարժական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը բացման խոսքում ընդգծեց գիտաժողովի կարևորությունը՝ որպես մի նոր հնարավորություն՝ վերլուծելու ոչ միայն ժամանակակից աշխարհի, այլև Արցախի շուրջ ողբերգական իրողություններն ու նրանց հետևանքները: Նման հարթակում հնարավոր է գտնել ճգնաժամային իրավիճակների լուծման ուղիները, քննարկել և վերլուծել իրադարձությունների խորքում տեղի ունեցող հոգեկան տրանսֆորմացիաներն ու տրավմաները, որն, ի վերջո, հանգեցնում է հոգեպես անառողջ հանրության գոյությանը:

Քննարկվող գերխնդրին անդրադառնալով՝ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը անդրադարձ արեց հիմնախնդիրների շուրջ առ այսօր գոյություն ունեցող թեզիսներին ու եզրահանգումներին, ընդգծելով, որ արագ փոփոխվող աշխարհում, արժեքների վերարժևորման համատեքստում, խիստ կարևոր է հասկանալ նորմայի, պաթոլոգիայի ճանապարհների խաչման, մարդու ծագումնաբանության և հոգեկանի ռեսուրսների ուղղվածության վերաբերյալ խնդիրները և մասնագիտական համատեղ քննարկումների միջոցով բացահայտել դրանց հաղթահարման ուղիները:

«Ձևերի փոփոխությունը բերում է նոր ուղիների որոնմանը»՝ ասաց ռեկտորը՝ գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներին մաղթելով արդյունավետ աշխատանք:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանն էլ կարևորեց նախաձեռնությունը՝ ժամանակակից կյանքի բարդ հարաբերությունների համապատկերում ընդգծելով հոգեբանության նորագույն հիմնախնդիրների լուծումները վեր հանելու և համատեղ լուծման ուղիներ փնտրելու հրատապությունը:

Ներկաները մեծ հետաքրքրությամբ լսեցին Իսրայելի համալսարանի դոկտոր, հոգեբույժ, անկախ հետազոտող Իոսիֆ Զիսլինի առցանց ուղերձը, ապա լսեցին ոլորտի առաջատար մասնագետ Մոսկվայի պետական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Ասմոլովին, ով հանդես եկավ «Գյոդելի սկզբունքը և Բաբելոնյան աշտարակի էֆեկտը. հոգեբանության և հոգեբուժության կողմից մարդաբանական թարգմանություն որոնելիս» խորագրով զեկուցումով: Նա հանգամանորեն խոսեց մարդկության երեք հիմնական՝ հասկացվածության, վստահության և մտքի ճգնաժամերի մասին, ապա պնդեց՝ մարդկային վախերն առաջանում են կյանքի իմաստը կորցնելու մտայնությունից:

Ակադեմիկոսը խիստ մտահոգություն հայտնեց այն մասին, որ հոգեբանները, հոգեբույժները, հոգեթերապևտները միմյանց չեն հասկանում, միաժամանակ չեն կարող «ապրել» առանց իրար:

Մատնանշելով ոլորտի մերօրյա խնդիրները՝ ակադեմիկոս Ալեքսանդր Ասմոլովը բարձրաձայնեց՝ դեպի մարդկային գիտակցությունն ու հոգին տանող ճանապարհին է դրանց լուծման բանալին, այլապես գիտության ոլորտին սպառնում է, այսպես կոչված, «բաբելոնյան աշտարակաշինության» ճգնաժամը:

Ակադեմիկոսը նկատեց՝ գիտաժողովի նպատակներն այդ առումով ունիկալ են, և սոցիալական աշխարհը փրկելու օրինակներ բերեց:

«Հիվանդության հոգեբանությունից դեպի առողջության հոգեբանություն. դրական վերաուղղվածություն» թեմայով զեկուցումով հանդես եկավ Մոսկվայի Ազգային հետազոտական համալսարանի պրոֆեսոր Դմիտրի Լեոնտևը, որն անդրադարձավ ոլորտի առաջատար մասնագետների տեսություններին, ներկայացնելով հետաքրքիր վիճակագրություն:

Կազանի պետական բժշկական համալսարանի պրոֆեսոր Վլադիմիր Մենդելևիչը գաղտնազերծեց Շիզոֆրենիայի ախտորոշման դեպքում գործածվող մի շարք տերմինների «իմաստային դատարկությունը»:

«Շիզոֆրենիան մարդու հոգեկան առողջության ողբերգական մոդելն է»,-ասաց պրոֆեսորը՝ հետաքրքիր ու իրավացի հարցադրումներ ներկայացնելով հոգեբույժներին՝ կապված շիզոֆրենիայի ախտորոշման ու ախտաբանական խնդիրների հետ:

Ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի վարիչ Լևոն Սարգսյանը մեզ հետ զրույցում ասաց. «Գործ ունեցանք միջազգային համբավ ունեցող պրոֆեսորների ու ակադեմիկոսների հետ, ովքեր նոր մտածողություն ու միտք բերեցին հայ հոգեբանական միջավայրը»:

Լ. Սարգսյանը գիտաժողովի առանձնահատկությունը պայմանավորեց վերրոհիշյալով, միաժամանակ վստահեցրեց՝ քննարկվեցին յուրահատուկ խնդիրներ հոգեբանության նոր ու ժամանակակից պրոբլեմների տեսանկյունից:

Միջազգային գիտաժողովի հաջորդ օրերի նիստերը ևս հագեցած էին անձի հոգեկան առողջության հոգեբանական հիմնախնդիրներին, կրթության, հոգեթերապիայի և կլինիկական խնդիրներին վերաբերող զեկուցումներով՝ հոգեբանական, հոգեբուժական լեզուների տեսանկյունից:

Երեքօրյա գիտաժողովի ընթացքում լսեցին շուրջ երեք տասնյակ զեկուցումներ, քննարկվեցին ոլորտին վերաբերող ամենատարբեր հարցեր: Ստեղծվել էր փորձի փոխանակման մի յուրահատուկ հարթակ, որը տարբեր երկրներից հրավիրված մասնագետներին համախմբել էր հոգեբանության արդի խնդիրների շուրջ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Ապրել ու մեռնել հայրենի–
քի համար. ահա խնդիրը, որ
իբրև նպատակ՝ ես ընտրել եմ
ինչ համար իմ մանկության
օրերից:

Միջազգային գիտագործնական համաժողով. ներառական կրթության ապահովման հիմնահարցերը

ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանն առցանց մասնակցեց «Ռուսաստանի Դաշնությունում ներառական կրթության ապահովման արդի հիմնահարցեր» IV միջազգային գիտագործնական համաժողովին:

Համաժողովը նախաձեռնել էր Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարանը, մասնակցում էին ՌԴ Լուսավորության փոխնախարարը, կրթական հաստատությունների ղեկավարներ, գիտական ոլորտի ներկայացուցիչներ, մանկավարժներ, դասախոսներ, հասարակական կազմակերպությունների և ծնողական համայնքների ներկայացուցիչներ:

ՀՊՄՀ ռեկտորը հույս հայտնեց՝ մասնակիցների համար հատուկ կրթության ոլորտում կուտակած փորձը, խնդիրների վերլուծությունն ու հետազոտող ուղղությունները գիտապրակտիկ ոլորտում կլինեն արդյունավետ փորձառության նոր հարթակում:

Սրբուհի Գևորգյանն իրավացիորեն նկատեց. «Հատուկ կրթության ոլորտը առանձնահատուկ կարիքներով անձանց համար պետք է լինի ոչ միայն ակադեմիական, այլև առավել լայն շրջանակների հետ համագործակցելու, հասարակությանն ինտեգրվելու, սոցիալական և շփման հմտությունները զարգացնելու հնարավորություն»: Այդ համատեքստում նա կարևորեց կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման և առանձնահատուկ կարիքներով անձանց հետ համատեղ գիտելիքի և հմտությունների ձեռքբերման, կրթական հաստատություններում բարեփոխումների անհրաժեշտությունը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը լիահույս է՝ եռօրյա համաժողովը կտա վերոհիշյալ և մյուս հարցերի պատասխանները, համատեղ լուծումներ կգտնեն հետագա աշխատանքի համար:

«Ռուսաստանի Դաշնությունում ներառական կրթության ապահովման արդի հիմնահարցեր» IV միջազգային գիտագործնական համաժողովում քննարկվեցին ներառական կրթական համակարգի նախագծումը՝ որպես որակյալ կրթության նախապայման, կրթության տարբեր մակարդակներում ներառականության մոդելավորման խնդիրներ, հասարակության ներառականությունը՝ որպես լավագույն փորձի գիտական հիմնավորում, ինչպես նաև անդրադարձան ներառական կրթության ոլորտի կադրերի պատրաստմանն առնչվող խնդիրների:

Հայ-հունգարական գիտակրթական համագործակցության շրջանակում

Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 20-ին հյուրընկալվել էր Հունգարիայի պատվիրակությունը, որը գլխավորում էր Հունգարիայի Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Միկլոշ Պանինը:

Պատվիրակության կազմում էին նաև Վարչապետի աշխատակազմի բաժնի պետ Բերտալան Կիշը, Արտաքին գործերի նախարարության «Հալածված քրիստոնյաների» բաժնի պետքարտուղար Ազբեյ Տրիստանը, Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, դոկտոր Բալինտ Կովաչը, Հայկական ինքնավարության նախագահ Ակոշ Իսեկուտսը:

Երկուստեք ակտիվ երկխոսություն ծավալվեց նոր գործընկերային համատեղ ծրագրերի շուրջ, արդյունքում՝ ավելի կամրապնդվի տարիներ առաջ ստեղծված համագործակցությունը, որի հիմնաքարը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի հետ կապերն են:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց վերոհիշյալ հարթակը, որի շուրջ ծավալվում են ոչ միայն կրթական, այլև սոցիալական, հումանիտար և այլ հարաբերություններ: Նա միաժամանակ նշանակալի համարեց երկուստեք ջանքերն ու ձեռքբերումները, որի արդյունքը ակնառու է, հատկապես կրթական ոլորտում նշելով զարգացման որակական հեռանկարները:

Փոխնախարար Միկլոշ Պանինն ընդգծեց, որ հանդիպումը միտված է տարբեր ուղղություններով համագործակցությանը Մանկավարժականի և Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի միջև՝ ասելիքն առավել կենտրոնացնելով գիտակրթական ծրագրերի շուրջ:

Պատվիրակության ղեկավարն առաջարկեց առաջիկայում հունգարագիտության կենտրոն բացել Մանկավարժականում, որտեղ կուսումնասիրվի ոչ միայն հունգարական պատմությունը, այլև լեզուն ու մշակույթը, դասախոսների և ուսանողների համար կիրականացվեն փոխանակման ծրագրեր: Այսպիսով, երկու երկրների և համալսարանների հարաբերությունները հայագիտության ամբիոնի և նորաստեղծ հունգարագիտության ամբիոնի համագործակցության միջոցով նոր զարգացումներ կամրագրեն:

Մ. Պանինը խոսեց նաև Հունգարիայում հայկական սփյուռքի, սփյուռքահայերի պատմության ու գործունեության մասին, որը ևս հիմք կդառնա համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման համար:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը նկատեց՝ էդգար Հովհաննիսյանի և հունգար Բալինտ Կովաչի հանդիպման ու գործընկերային հարաբերությունների արդյունքում ծնվեց համալսարանների միջև գիտակրթական հարաբերությունների նոր շփումը, որն առաջիկայում կարող է դառնալ հայ-հունգարական հարաբերությունների առավել ընդգրկուն հարթակ:

ՀՊՄՀ ռեկտորը հյուրերին ներկայացրեց բուհի մասնագիտությունները՝ առաջարկելով բոլոր հնարավոր տարբերակները, որոնց շուրջ կարելի է համագործակցության եզրեր գտնել: Փաստաթղթային ձևակերպումներից հետո կկնքվի երկկողմ հուշագիր և հայ-հունգարական հարաբերությունները կթևակոխեն զարգացման նոր փուլ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Աշխատանքային հանդիպում

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն աշխատանքային հանդիպում ունեցավ Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի երկարատև խնամքի գծով պատասխանատու Ստեֆանի Իլինկայի և ԱՀԿ հայաստանյան գրասենյակի Վերականգնման, աջակցող տեխնոլոգիաների և հաշմանդամության ներառականության ծրագրի ղեկավար Ժաննա Հարությունյանի հետ:

Խոսակցություն ծավալվեց ՀՀ-ում տրամադրվող վերականգնողական ծառայությունների, խնդիրների, ինչպես նաև ոլորտի մասնագիտություններ պատրաստելու գործընթացի մասին:

Պրոռեկտորն ընդգծեց, որ մեզանում կան ինչպես համակարգային, այնպես էլ օրենսդրությանը վերաբերող մի շարք խնդիրներ, և ցավով նկատեց, որ վերականգնողական աշխատանքներին վերաբերող մասնագիտություններն ունեն նվազ գրավչություն, վարձատրությունը ևս ցածր է:

Հոգեբաններ, էրգոթերապիստներ, լոգոպեդներ, հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ. Մարիաննա Հարությունյանը ներկայացրեց մասնագիտությունների ցանկը, որ պատրաստում է մանկավարժական բուհն ու հավելեց՝ շրջանավարտներից շատերն այսօր տարբեր հաստատություններում իրա-

կանացնում են վերականգնողական աշխատանքներ և ծառայություններ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև մեր երկրում վերականգնողական կենտրոնների սուղ թվաքանակին, վերականգնողական ծառայությունների բարելավման գործում ԿԳՄՍ-ի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների անելիքներին:

Պրոռեկտորը հույս հայտնեց, որ հարցի վերաբերյալ Մանկավարժական համալսարանի ներկայացրած տեսակետը ԱՀԿ-ի համար կլինի արդյունավետ, որպեսզի Կառավարության հետ համագործակցության ընթացքում հնարավոր լինի ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն՝ ի նպաստ վերականգնողական ծառայությունների ոլորտի զարգացման:

Նշենք, որ հոկտեմբերի 23-27-ը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցությամբ նախաձեռնել է առաքելություն՝ օժանդակելու ՀՀ վերականգնողական բուժօգնության և աջակցող տեխնոլոգիաների ազգային ռազմավարությունը և գործողությունների պլանը ավարտին հասցնելուն: Այդ շրջանակներում ոլորտի ներկայացուցիչների հետ կազմակերպվում են տարատեսակ հանդիպումներ, որոնց մասնակցում են ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի և հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ-փորձագետները:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Ավարտվեց պարտադիր վերապատրաստումների ևս մեկ փուլ

Հերթական պարտադիր ատեստավորման դասընթացներին բոլոր մարզերից Մանկավարժական համալսարանում մասնակցեց 137 ուսուցիչ 21 մասնագիտությունների գծով:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց ուսուցչական համակազմին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ վերապատրաստման գործընթացը հաջողությամբ ավարտելու առթիվ:

Ռեկտորն ընդգծեց՝ լավ է, որ ուսուցիչներն ունեն ձգտում և նվիրում մանկության հանդեպ: Համալսարանի ղեկավարը խոսեց փոփոխվող արժեհամակարգի և մեթոդների մասին՝ նկատելով. «Վերապատրաստումների գործընթացն այն հարթակն էր, որտեղ երկխոսության ձևաչափով, մասնագիտական ձեռքբերումներին զուգահեռ, ձեր առաջարկություններն օգնում են վերանայումներ անել ու բարելավել գործընթացը: Ձեր մասնագիտական իղձերը կարողացեք ամբողջապես իրացնել դպրոցական տիրույթում»: Ռեկտորը հույս հայտնեց, որ վերապատրաստման ընթացքում ձեռք բերած նորարարական գիտելիքները կնպաստեն հետագա աշխատանքների բարելավմանը:

Ռեկտորը նաև խոսեց կրթական տարբեր պարադիգմերի ազդեցության մասին՝ վստահեցնելով՝ մեզ համար մշտապես կարևոր են ուսուցչի խնդիրները և մասնագիտական զարգացումները: Համալսարանում ձեռք բերած գիտելիքներն էլ ծառայեցնեն ի նպաստ դպրոցի և սովորողների:

Ամփոփելով՝ ռեկտորը հորդորեց՝ յուրաքանչյուրն իր պատասխանատվության տիրույթում իր գործը լավ անի:

Շուրջ 5 տասնամյակ Ե. Չարենցի անվան դպրոցում սերունդներին կրթող Այծեմնիկ Նահապետյանը բոլոր ուսուցիչների անունից շնորհակալություն հայտնեց բարձր մակարդակով անցկացված վերապատրաստումների համար՝ ընդգծելով նաև մարդկային գործոնը, միաժամանակ դիտարկելով, որ վերապատրաստումների գործընթացում նաև պրակտիկ մասին պետք է ուշադրություն դարձնել:

«Ես չեմ սխալվել՝ ընտրելով Մանկավարժական համալսարանը»,-ասաց նա:

Ելույթ ունեցողը կարևորեց սովորողների հայեցի դաստիարակությունը, որին պետք է ձգտի յուրաքանչյուր ուսուցիչ:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը վերապատրաստման հավաստագրեր հանձնեց գործընթացը հաջողությամբ ավարտած ուսուցիչներին և վստահեցրեց՝ վերապատրաստումների ընթացքը մեզ համար նաև նորովի վերակազմավորվելու գործընթաց է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Աշխատաժողով՝ ռուս գործընկերների մասնակցությամբ

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մաքսիմ Կուլեշինի գլխավորությամբ:

Ռուս գործընկերներն աշխատանքային հանդիպում ունեցան ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի և Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանի հետ՝ քննարկելով համատեղ մի շարք ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Ֆոկինն առաջարկեց դիտարկել ՀՊՄՀ-ի Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի օժանդակությամբ մեր երկրում ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցման ինտենսիվ մեթոդներ որակավորման բարձրացման դասընթացներ անցկացնելու հնարավորությունը: Դրանց կարող են մասնակցել ոլորտի մասնագետները, ինչպես նաև մագիստրոսներն ու շրջանավարտները, որոնք կստանան հավաստագրեր:

Միաժամանակ դիտարկվեցին Մանկավարժականի աջակցությամբ ռուսաց լեզվի իմացության թեստավորման կազմակերպման հնարավորությունները:

ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը հետաքրքրվեց գործընթացում «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնի հնարավոր մասնակցության և համագործակցության վերաբերյալ:

Պրոռեկտոր Իսպիրյանը վստահեցրեց՝ բուհի ղեկավարը կարևորում է գործընկեր բուհի հետ համատեղ ուսումնական ծրագրերի, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը:

Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մաքսիմ Կուլեշինը տեղեկացրեց նաև, որ առաջիկայում նախատեսում են անցկացնել «Ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթը՝ ՀՊՄՀ-ի դասախոսական կազմին առաջարկելով մասնակցել:

Հյուրերը տեղեկացրին, որ մրցույթի հաղթողները հնարավորություն կունենան Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանում մասնակցել վերապատրաստման մեկշաբաթյա դասընթացի:

Աշխատանքային հանդիպումն ընթացավ հետագայում մի շարք գործնական քայլերի իրականացման ամրագրմամբ՝ գիտական ամսագրերում փոխադարձ տպագրություն, ՀՊՄՀ ուսանողների համար կրթաթոշակի սահմանում և այլն:

Եռօրյա դասընթաց՝ «ՀՀ դպրոցներում ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ժամանակակից մոտեցումներ» խորագրով

ՀՊՄՀ-ի և Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի (ՌԴ) համատեղ նախաձեռնությամբ և ՀՀ-ում «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության աջակցությամբ հոկտեմբերի 25-ին մեկնարկեցին «ՀՀ դպրոցներում ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ժամանակակից մոտեցումներ» խորագրով որակավորման բարձրացման դասընթացները:

Ձեռնարկի նպատակն էր զարգացնել մեր երկրում հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների մասնագիտական հմտությունները. վարպետաց դասեր անցկացնելու նպատակով մեր երկրում էին ՀՊՄՀ գործընկեր՝ Հարավկովկասյան դաշնային համալսարանի առաջատար մասնագետները:

Հոկտեմբերի 25-27-ն անցկացված դասընթացները հնարավորություն տվեցին փոխանակվել գիտամեթոդական տեղեկատվությամբ, ծանոթանալ հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառման հեռանկարներին, ռուսաց լեզվի և գրականության դասավանդման արդի միտումներին: Բացի այդ, մասնակիցները ծանոթացան ժամանակակից դպրոցում ռուսերենի դասավանդման յուրահատկություններին, ռուսաց լեզվի և գրականության մշակութաբանական ասպեկտներին և այլն:

Դասընթացի կարևորությունն ընդգծեց նաև ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Նա ուրախությամբ նկատեց՝ մասնակիցների մի մասն արդեն երկրորդ անգամ են միանում ծրագրին :

Պրոռեկտորը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին՝ ազգանվեր, մարդասիրական մասնագիտություն ընտրելու համար: Վստահ է՝ ուսուցչի մասնագիտությունն ամենակարևորն է. ոչ միայն սովորեցնում է, այլև կերտում ապագան:

Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի միջազգային նախագծերի և ծրագրերի բաժնի պետ Վլադիմիր Սամոյլենկոն ուրախ է, որ կրկին Հայաստանում են, Մանկավարժականում: Նա վստահեցնում է՝ վերանայել են դասընթացի նյութը, ներկայանալու են նոր, առավել արդյունավետ ծրագրով:

Վլադիմիր Սամոյլենկոն Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ռեկտորի անունից ողջունեց մասնակիցներին և գործընկեր բուհին՝ վստահեցնելով, որ միասին քարտեզագրված գաղափարներն ու նախագծերը կլինեն երկուստեք արդյունավետ:

Վերապատրաստման առաջին օրն անդրադարձ արվեց ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման երկրագիտական սկզբունքներին, օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի շրջանակներում կիրառվող հիմնական հնարքներին, ընթերցանության և գրականության դասերի ընթացքում ինտերակտիվ միջոցների և առցանց նյութերի կիրառման հնարավորություններին:

Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի (ՌԴ) Ռուս և համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ Լիլյա Սավելովնան, որը վերապատրաստում էր ծրագրի մասնակիցներին, նկատում է՝ հավաքվածների շրջանում պատահական մարդիկ չկան. մասնագետներ են, որոնք անտարբեր չեն կրթության, դասավանդման մեթոդիկայի ոլորտում կատարվող փոփոխությունների հանդեպ: Վստահ է՝ ոլորտն ավելի լավը կարելի է դարձնել միայն համատեղ ջանքերի շնորհիվ՝ համադրելով, շեշտադրելով, փոխակերպելով մատուցվող նյութը:

Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության ներկայացուցիչներ Այգուլ Շամսուտդինովան և Սոնա Սարաջյանն ուրախությամբ են նկատում՝ եռօրյա դասընթացին այս տարի հայտագրվել է 150 մասնակից:

Վստահ են՝ երկու բուհերի շնորհիվ «ՀՀ դպրոցներում ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ժամանակակից մոտեցումներ» խորագրով որակավորման բարձրացման դասընթացներն այս տարի ևս հաջողված են:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Հայ-լիտվական կապեր

Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 27-ին հյուրընկալվել էին Լիտվայի Վիտաուտաս Մագնուսի համալսարանի Հումանիտար ֆակուլտետի լիտվագիտության ամբիոնի վարիչ Լաուրա Կամանդուլիտե Մերֆելդիենեն և Հայաստանի լիտվական համայնքի նախագահ Օլգա Արզումանյանը:

Լիտվացի գործընկերներին ընդունեց ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Հանդիպմանը ներկա էին Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանը, դեկանի տեղակալ Սուսաննա Մուրադյանը և մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ Ժաննա Պայլոզյանը:

Կողմերը քննարկեցին առաջիկա համագործակցության հնարավորությունները, երկուստեք ծանոթացան կրթական հաստատությունների մասնագիտական ուղղվածություններին:

Լիտվացի հյուրերը հետաքրքրված էին հատուկ կրթության մասնագիտություններով, որի շուրջ գործնական և շահագրգիռ խոսակցություն ծավալվեց:

ՀՊՄՀ պրոռեկտորն ասաց, որ երկու բուհերի մեջ համագործակցության հուշագիր կա, և իրենց ռեկտորն այցելել է Մանկավարժական համալսարան: Նա առաջարկեց համագործակցությունն սկսել Էրազմուս+ ծրագրից, իսկ հուշագրի սահմաններում կարող են երկուստեք ընդլայնել գործընկերությունը, այդ թվում՝ հատուկ կրթության ոլորտում:

Հումանիտար ֆակուլտետի լիտվագիտության ամբիոնի վարիչ Լաուրա Կամանդուլիտե Մերֆելդիենեն դասավանդում է մանկավարժական մասնագիտություններ և վստահեցնում է՝ իրենց մոտ էլ այդ մասնագիտությունները շատ ակտուալ են: Նրա կարծիքով լավ կլինի, որ Մանկավարժական համալսարանի ուսանողներն այցելեն Լիտվա և ներգրավվեն բուհի կողմից իրականացվող միջազգային ծրագրերում, իսկ հայ գործընկերները Լիտվայում ծանոթանան կրթական գործընթացին: «Մենք շատ ենք կարևորում միջազգային համագործակցությունը, որովհետև այն համարում ենք մեր ստրատեգիական կարևոր ուղղությունը»,-ասաց պրոռեկտորը՝ ընդգծելով, որ մերձբալթյան երկրները մեզ հարազատ են:

Իսկ համագործակցությունն ավելի վաղ է սկսվել՝ «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում, որի ընթացքում հայ ուսանողները ծանոթացել են Լիտվայի մշակույթին, պատմությանն ու լեզվին:

Հատուկ կրթության ֆակուլտետի ներկայացուցիչների և լիտվացի գործընկերոջ միջև շահագրգիռ խոսակցություն ծավալվեց հատուկ կարիքներով անձանց խնդիրների, հատուկ կրթության ոլորտում դասավանդվող առարկաների արդիականության շուրջ: Երկուստեք համոզված են՝ համագործակցության եզրեր կգտնեն նաև այս ոլորտում:

Հայաստանի լիտվական համայնքի նախագահ Օլգա Արզումանյանն էլ, որ ազգությամբ ռուս է, բայց կրում է հայ ամուսնու ազգանունը, հավելեց, որ Հայաստանում գործում է կիրակնօրյա լիտվական դպրոց, որի հետ ևս կարելի է համագործակցել, ստեղծել միջմշակութային կապեր:

Լաուրա Կամանդուլիտե Մերֆելդիենեն ասաց, որ առաջին անգամ է Հայաստանում, բայց տպավորություններն այնքան վառ են, որ արդեն որոշել է կրկին այցելել մեր երկիր:

Արդեն 16-րդ անգամ

Արտասահմանյան գրականության ամբիոնի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում անցկացվեց արդեն ավանդական դարձած միջազգային գիտագործնական գիտաժողով: Արդեն 16-րդ անգամ անցկացվող գիտաժողովին, որն ուներ առցանց և առերես ձևաչափ, մասնակցում էին Հայաստանի, ՌԴ-ի և Ուկրաինայի առաջատար բուհերի դասավանդողներ և մագիստրոսներ:

Ուսումնագիտական գծով ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանն ընդգծեց գիտաժողովի կարևորությունը և նկատեց, որ անցկացվում է մեր երկրի համար բարդ ժամանակներում. այն լավ առիթ է վերանայելու անձնային և աշխատանքային առաջնահերթությունները և հասկանալու, որ յուրաքանչյուրը պետք է ուժ գտնի՝ իրագործելու գիտակրթական ոլորտի իր անելիքները:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը փաստեց՝ գիտաժողովի նյութերի ժողովածուի թեմաները հետաքրքիր և ուսուցանող են, ապա կարևորեց արտասահմանցի գործընկերների գիտական տեսակետները, միաժամանակ ցավով նկատեց՝ պատահականությամբ ներառված են այն երկրները, որտեղ այսօր կա անհասկացվածություն և կոնֆլիկտ: Տիգրան Միքայելյանի կարծիքով ամենաբարդ ժամանակներում անգամ չափազանց կարևոր է նման ձեռնարկների անցկացումը:

Միջազգային գիտագործնական գիտաժողովի մասնակիցների զեկուցումները վերաբերում էին գրականության մի շարք խնդիրների, գիտական ոլորտում անհայտ և դեռևս չհրատարակված նյութերի, թարգմանության և գրական կապերի հետ կապված մի շարք հարցերի, հայ գրականության վրա ռուսական ազդեցություններին և առնչություններին, հայ և ռուս գրականությանը՝ որպես համաշխարհային գրականության անքակտելի մաս:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռուզան Թադևոսյանի խոսքով միջբուհական գիտաժողովը վաղուց արդեն հատել է բուհական սահմանը, դարձել միջազգային՝ մասնակիցներին միավորելով ընդհանուր խնդրի շուրջ՝ գրական կապեր, թարգմանություն, ռուս գրականության հիմնահարցեր:

Ամբիոնի վարիչն անդրադառնում է նաև գիտաժողովի այս տարվա նորարարությանը՝ առաջին անգամ ներկայացված է նաև իսպանական գրականությունը՝ իսպաներենով:

Պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը գիտաժողովը կարևորեց նաև գիտական ժողովածուների տպագրման տեսանկյունից. նյութերն օգտագործվում են դասախոսական պրակտիկայում:

Գիտաժողովում հիմնախնդիրների շուրջ ծավալվեց գործնական քննարկում, եղան պրակտիկ առաջարկություններ, որոնք կդառնան հետագա քննարկումների նյութ:

Լսեցին արաբագետ Արշակ Փոլադյանին

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնը հոկտեմբերի 31-ին մեկնարկեց սեմինար-բաց դասախոսությունների շարք: Պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը ներկայացրեց օրվա բանախոսին՝ արաբագետ, պատմաբան, այժմ Թունիսի և Մարոկկոյի, իսկ նախկինում Սիրիայի դեսպան Արշակ Փոլադյանին: Վերջինս շուրջ 50 տարի առաջ ավարտել է այս բուհը, որն իր համար շատ հոգեհարազատ է:

Արշակ Փոլադյանը հանգամանորեն խոսեց հայ-արաբական կապերի ու հարաբերությունների մասին՝ պատմական տարբեր շրջանների համատեքստում:

Պատմության մեջ ետ գնալով՝ Ա. Փոլադյանը խոսեց հայերի և սեմական էթնիկական ծագման արաբների 2000 տարվա պատմություն ունեցող հարաբերությունների մասին, անդրադարձավ տարիների ընթացքում ձևավորված դիվանագիտական հարաբերություններին, հայերի հետ շփումներին ու ռիսկերին:

Բանախոսն անդրադարձավ արաբական աշխարհում սոցիալ-քաղաքական-տնտեսական և մշակութային ոլորտում հայերի մեծ դերակատարությանը, մասնավորապես 19-րդ դարի երկրորդ կեսին Եգիպտոսում գործունեություն ծավալած Նուբար փաշային (Նուբարյան):

Տարբեր ժամանակներում հայերը տարածվել են արաբական երկրներում. հայոց երթը ձգվել է մինչև Եթովպիա:

Խոսելով Կահիրեի դարպասների մասին՝ նա ներկայացրեց, որ զարդանախշերը շատ նման են Անիի դարպասների զարդանախշերին. նշանակում է այստեղ ևս եղել է հայի գործոնը:

Այստեղ հայերը հատկապես ակտիվորեն մասնակցել են Եգիպտոսի ռազմաքաղաքական կյանքին:

Հայերը հաստատվել են հիմնականում Սիրիայում, Լիբանանում և մի շարք այլ արաբական երկրներում: Այսօր 114 գաղթօջախ ունենք, որոնք անցել են Սիրիայի անցած ուղով:

Խորհրդային տարիներին Հայաստանի և արաբական երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ չեն եղել, այդ հարաբերություններն ստեղծվեցին 1992 թվականից: Արշակ Փոլադյանը նշեց, որ Հայաստանի անկախացումը ճանաչեցին Սիրիան, Լիբանանը, Մարոկկոն:

Դիվանագետը խոսեց Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումների, Թուրքիայի հովանու ներքո գործող թշնամի երկրի և արաբական երկրների հարաբերությունների մասին, որոնց ազդեցությամբ հայերը երկար ժամանակ ագրեսոր են ճանաչվել: Նաև հավելեց, որ այսօր արաբական աշխարհում հայկական 8 դեսպանություն կա՝ Կահիրեում, Սիրիայում, Արաբական Միացյալ Էմիրություններում (վերջինում առաջին դեսպանն ինքն է եղել), Իրաքում, Քուվեյթում, Քաթարում Թունիսում և Մարոկկոյում, գործում են նաև պատվո հյուպատոսություններ: Դեսպանն ընդգծեց, որ արաբական աշխարհում այսօր հայ դեսպաններն ակտիվ մասնակցություն ունեն դիվանագիտական հարաբերություններում:

2008 թվականից Հայաստանը Արաբական երկրների լիգայի դիտորդ է, իսկ Սաուդյան Արաբիայի հետ դիվանագիտական հարաբերություններն առայժմ չեն ստացվում:

Բանախոսն ընդգծեց, որ վերջին տարիներին արաբական աշխարհի հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերություններում առաջընթաց է նկատվում, սակայն մի շարք երկրներում աշխարհաքաղաքական մարտահրավերների պատճառով հայահոծ համայնքները նոսրացել են, ինչպես Սիրիայի 20-30 հազար հայերից 10 հազարն է մնացել:

Այնուամենայնիվ, հայ-արաբական հարաբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, որտեղ ամենակարևորը ընդհանուր շահն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ոսկեդարի վերջին պատմիչը

«Խոսքի վայելուչ դասավորություն, կանոնացված գիտության օրենքի համապատասխան ճշմարիտ շարադրանք..., որպեսզի իմաստասեր ունկնդիրները չպարսավեն, չեղած բաներ չավելացնել՝ խոսքի պարապն աճեցնելով, չնվազեցնել եղածները և կարճակտոր չպատմել անփույթ խոսքով, այլ ամեն ինչ երևան հանել ողջախոհ զգուշությամբ»:

Ղազար Փարպեցի
«Հայոց պատմություն»

Արագածոտնի մարզի Փարպի գյուղի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցում հոկտեմբերի 25-ին կազմակերպվել էր հանրապետական գիտաժողով՝ նվիրված ոսկեդարի վերջին պատմիչ Ղազար Փարպեցուն:

Բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությանը սիրով արձագանքեցին Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գալուստ Թադևոսյանը, դպրոցի տնօրեն Բավական Հարությունյանը:

Հյուրերին Փարպի գյուղում դիմավորեցին աղ ու հացով, ծանոթացրին դպրոցի պատմությանը: 241 աշակերտ ունեցող դպրոցից Արցախի պատերազմում հերոսի մահով նահատակվել են 5-ը: Դպրոցական պատին հերոս տղաներին նվիրված անկյունն էր, որ առաջինն էր դիմավորում այցելուներին:

Դպրոցի տնօրենը հպարտությամբ փաստեց, որ իրենց համար պատիվ է Ղազար Փարպեցուն նվիրված գիտաժողովը հենց իր հայրենի կրթօջախում անցկացնելը:

Ներկաները դիտեցին գյուղի մասին պատմող սահիկաշար: Դարերի պատմություն ունեցող գյուղի մասին վկայում են առ այսօր կանգուն մնացած 7 պատմամշակութային հուշարձանները:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը՝ բարձրաձայնելով, որ նման գիտաժողովների նախաձեռնումն ու անցկացումը մեծապես նպաստում է կրթական համակարգի բարելավմանը:

Մարզպետն ընդգծեց, որ հայազգի մեծանուններին պետք է ճանաչել ոչ թե մակերեսորեն, այլ գիտական մակարդակում: Նա շնորհակալություն հայտնեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին և Բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին՝ մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչների և դպրոցի ուսուցչական կոլեկտիվի հետ մասնագիտական գիտելիքները կիսելու համար:

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Իսպիրյանը ռեկտորատի անունից ողջունեց գիտաժողովի մասնակիցներին՝ միաժամանակ ընդգծելով ստեղծված դժվարին

պայմաններում հանձնառությունները պատվով կատարելու անհրաժեշտությունը:

«Այսօրվա գիտաժողովը յուրահատուկ խորհուրդ ունի, որովհետև այն անց է կացվում մեծ պատմիչ, հայրենասեր, ճարտասան Ղազար Փարպեցու ծննդավայր Փարպի գյուղում,-ասաց պրոռեկտորը՝ անդրադարձ անելով գիտաժողովների կազմակերպման կարևորությանը և բոլոր ժամանակներում մանկավարժների գործի անգերանցանելիությանը: -Բոլոր այն հասարակարգերում, որտեղ մանկավարժը գնահատված է, հասարակությունն ունի կրթվածության և զարգացվածության այլ աստիճան: Հենց այդ համատեքստում է արժևորվում Մանկավարժական համալսարանի դերը: Այսօր ավելի քան երբևէ մեզ պետք է ուժեղ դպրոց, կայուն կրթական համակարգ, ապագան այսօր կառուցելու արժեհամակարգ կրող հասարակություն»:

Պրոռեկտորն ընդգծեց բուհ-դպրոց համատեքստում Փարպի գյուղի միջնակարգ դպրոցի կոլեկտիվի հետ համագործակցության կարևորությունը՝ վստահեցնելով, որ այն կլինի շարունակական:

Պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը 5-րդ դարի պատմագիտական հարուստ մատյանների շարքում ներկայացրեց վերջին պատմիչի՝ Փարպեցու «Հայոց պատմության» հիմնական շեշտադրումները, անդրադարձավ Հայաստանի այդ ժամանակի մարզպան Վահան Մամիկոնյանին ուղված հռչակավոր «Թղթին», ընդգծեց Փարպեցու «Պատմության» պատմական և գեղարվեստական արժեքը, կարևորեց այն որպես արժեքավոր սկզբնաղբյուր հայ հետագա պատմագրության ու պատմագիտության համար:

Բանասիրական ֆակուլտետի դեկան,

պրոֆեսոր Աշոտ Գալստյանն անդրադարձավ պատմիչի լեզվական առանձնահատկություններին՝ նրա պատմության՝ «Արարատյան դաշտի նկարագիրը» և «Նվարսակի պայմանագիրը» հատվածներում՝ փաստելով, որ գրաբարյան գրական կոթողների լեզվական ուսումնասիրությունը նպաստում է հին հայերենի գիտական նկարագիրն առավել համապարփակ դարձնելուն: Պրոֆեսորը խոսեց պատմական երկում բնութագրական բառերի առատ գործածության, բառակազմական հետաքրքիր դրսևորումների և ոճական հատկանիշների մասին:

«Պատմություն Հայոց» երկի հեղինակը գրական լեզուն հարստացրել է տասնյակ բառերով, փոխառություններ չի օգտագործել, բնության գեղարվեստական նկարագրությունները ներկայացրել է հոգեբանական հիմքերով, իր խոսքը օժտել է փոխաբերություններով, համեմատություններով ու հակադրություններով, պատմությունը ներկայացրել ճոխ ու դյուրըմբռնելի լեզվով:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Հովսեփյանը հանգամանորեն ներկայացրեց «Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը և Աստվածաշունչը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզան Դոլուխանյանն անդրադարձավ Ավարայրի ճակատամարտի մասին Եղիշեի և Ղազար Փարպեցու պատմություններին, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Մարդյանը ներկայացրեց «Ղազար Փարպեցու «Թղթի» քննադատական ու դաստիարակչական ոգին», ամբիոնի ասպիրանտ Հովհաննես Սարգսյանն էլ ոսկեդարի պատմիչին ներկայացրեց Ղևոնդ Ալիշանի աշխատություններում:

Ի դեպ, նախապես հրատարակել էին գիտաժողովի հոդվածների ժողովածուն, որի օրինակներից նվիրեցին նաև Փարպի գյուղի միջնակարգ դպրոցին:

Գիտաժողովի մասնակիցները, մարզպետարանի աշխատակիցները և ուսուցչական կոլեկտիվը ծաղիկներ խոնարհեցին Ղազար Փարպեցու արձանին և այցելեցին Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Օրը հիշարժան դարձավ ոսկեդարի վերջին պատմիչի կյանքի ու գործի գիտական քննարկումներով և արժևորումներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մարինե Ալեսի սիրուց ու ապրումներից ծնված երգերը

Տարիների աշխատանքի արդյունքում Մարինե Ալեսի և երգչուհի Ծովինար Ամիրյանի հետ ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտական մանկավարժության ամբիոնի դոցենտ Արուսյակ Կոստանյանի համատեղ ջանքերից է ծնունդ առել «Երգեր և ռոմանսներ» ժողովածուն, որն ընդգրկում է հեղինակի 21 երգեր և ռոմանսներ: Այդ երգերը ծնվել են հայ կնոջ մտքի և հոգու ներդաշնակությունից, որ խոսքի և մեղեդու անզուգական միախառնությամբ հոսում են դեպի ունկնդրի սիրտը:

Տաղանդավոր երգահան Մարինե Ալեսի ստեղծագործությունները ժանրային առումով երկու ոճերի՝ դասական և քաղաքային ռոմանսի յուրահատուկ համադրում է. ահա ինչու երգահանի քնարական մեղմ ու նուրբ երգերը գրավում են առաջին հայացքից, շոյում լսելիքդ:

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում հոկտեմբերի 23-ին Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Արուսյակ Կոստանյանը, դասախոսները, ուսանողները և շրջանավարտները ներկայացրին տաղանդավոր երգահան Մարինե Ալեսի «Երգեր և ռոմանսներ» վոկալ շարքից 15 երգ՝ Արուսյակ Կոստանյանի դաշնամուրային նվագակցությամբ: Ընդգծենք, որ բոլոր երգերի դաշնամուրային տարբերակը և նոտագրումը կատարել է դոցենտ Արուսյակ Կոստանյանը:

Երգահանի հայերեն և ռուսերեն լեզուներով երգերը, որ մինչ այդ հայտնի էին համակարգչային մշակմամբ, նոտագրված տարբերակով 2021 թվականին հրատարակվել են շքեղ ալբոմի մեջ, գլխավոր խմբագիրը Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, Հայաստանի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, կոմպոզիտոր Արամ Սաթյանն է:

Մարինա Ալեսի երգերի մի մասը հնչել են հայ երգիչների կատարմամբ, սիրվել և ճանաչում են բերել հեղինակին: Ժողովածուում ընդգրկված երգերի մի մասն էլ վերջերս է գրվել:

Հանդիսատեսին ներկայացված 15 երգերից 7-ը առաջին անգամ էին կատարվում: Դրանցից էր «Լույսի օրոր» ստեղծագործությունը, որից էլ սկսվել է Արուսյակ Կոստանյանի և Մարինե Ալեսի համագործակցությունը:

Երգահանի ցանկությունն է, որ իր երգերը ներառվեն կրթական համակարգում: Ժողովածուն այսուհետ հնարավորություն կտա այդ երգերի կատարումներին անդրադառնալ երաժշտական տարբեր ուսումնական հաստատություններում՝ բուհերում ու քոլեջներում:

«Երգեր և ռոմանսներ» վոկալ շարքը հեղինակը բաժանել էր Նվիրում, Սեր և Հույս ենթաբաժինների, որոնց ներքո հանդիսատեսը սիրով ունկնդրեց «Հազարան բլբուլ», «Պատրանքի թևով», «Լույսի օրոր», «Իմ բարդիներ», «Վարդագույն քաղաք», «Քնքշանք», «Տարիներ» և մյուս երգերը Անժելա Ղալեչյանի, Վաղինակ Հակոբյանի, Արուսիկ Աբրահամյանի, Եվա Մինասյանի, Մանե Գաբրիելյանի, Աիդա Գևորգյանի, Կարինե Թադևոսյանի և դասախոս Զարուհի Սայադյանի գեղեցիկ կատարումներով:

«Աստղերի կարուսել» երգի խմբային կատարմամբ ամփոփվեց Մարինե Ալեսի երգերի ժողովածուի ներկայացումը:

Արուսյակ Կոստանյանի դաշնամուրային նվագակցությունը և երգիչների հրաշալի մեկնաբանությունները բավականին տպավորիչ էին: Դրանք հեղինակի՝ մարդկային սիրո և ապրումների մի-մի ուղերձներ էին, որ ունկնդիրների հոգիներում նոր ու գեղեցիկ հույզեր արթնացրին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ և ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորմամբ հրատարակվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանի «Հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին օտարազգի հայագետների և ճանապարհորդների գնահատմամբ» գիրքը:



Ստորև ներկայացնում ենք գրքի նախաբանը:

Գիտական արժեքավոր աշխատություն

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ Բագրատունիների Անի մայրաքաղաքը զբաղեցնում է եզակի տեղ: Քաղաքը հատկապես X դարի վերջին և XI -ի առաջին կեսին եղել է աշխարհահռչակ: Այն Արևմուտքն ու Արևելքը կապող առևտրական, մշակութային, քաղաքական կարևոր հանգույց էր:

Անին գրավել է օտարերկրյա ճանապարհորդների ու գիտնականների ուշադրությունը, որոնք հատկապես XIX դարասկզբից սկսած պարբերաբար այցելել են արդեն անմարդաբնակ ու ավերակների վերածված քաղաքը: Սակայն այդ ավերակներն ավելի քան խոսուն են եղել, ու մեզ են հասել օտարազգի մարդկանց հիացական գնահատականները՝ տրված Անիին և հայոց ճարտարապետությանը:

Անին ներկա Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիից ընդամենը 30 կիլոմետր հեռավորության վրա է: Սակայն Հայաստանից հնարավոր չէ գնալ ու տեսնել Անին, որովհետև հայ-թուրքական սահմանը փակ է: Ավելին՝ ներկա Անիում չեք գտնի որևէ հուշարձան, որի բացատրությունը տվող տախտակը ծանուցի, թե այն հայկական է: Անին ներկայացվում է որպես Թուրքիայի պատմական ճարտարապետական ժառանգություն:

Հայտնի է, որ 1319 թվականի ավերիչ երկրաշարժից հետո հայերը լքեցին քաղաքը, սակայն ավերածությունը շարունակեցին թուրքերը, որոնք Անիի հուշարձանների սրբատաշ ու ճարտարապետական շքեղ զարդաքանդակներ ունեցող քարերը տարան իրենց շինությունների համար:

Հիմա քաղաքը դեռ պահպանում է իր շքեղ ու հզոր պարիսպները՝ գլխավոր մուտքի վրա ունենալով հայ Բագրատունիների զինանշանը՝ հովազը: Կան մի շարք եկեղեցիներ, որոնք մասամբ են ավերված: Հրաշալի տեսք ունի Անիի Մայր տաճարը, որը գերմանացի բնագետ Աբիխը համարում է X-XI դարերի համաշխարհային ճարտարապետության գլուխգործոց:

Այս գիրքը գրվեց պատմական ճշմարտությունը վերականգնելու համար: Ամեն ազգ մարդկության համընդհանուր մշակույթին տվել է և տալիս է իրեն հատուկ գլուխգործոցներ: Ոչ մեկը Մեքսիկայի Չիչենիցան իրավունք չունի ուրիշին վերագրել, Կոլիզեյը Իտալիայինն է, Չինական պարիսպը՝ չինացիներինը, Պերգամոն թանգարանում գտնվող Իշտար աստվածուհու հրաշալի տաճարը՝ ասորիներինը: Նման փաստերը շատ-շատ են: Անին էլ, թեպետ ավերված՝ սակայն դեռ չքնաղ, հայերինն է:

Գրքի վերջում դրված են անգլերեն և ֆրանսերեն ծավալուն վերջաբաններ, որոնք ներկայացնում են օտարների վկայությունները Հայաստանի շքեղաշուք մայրաքաղաք Անիի մասին:

Գրքի լուսանկարները տրամադրել է պատմական գիտությունների դոկտոր, Անիի հնությունների գիտական հետազոտական արժեքավոր գրքերի հեղինակ Կարեն Մաթևոսյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Առցանց ձևաչափով մասնակցեց գիտապրակտիկ կոնֆերանսին

Մանկավարժական համալսարանի Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Վլադիմիր Կարապետյանն առցանց ձևաչափով մասնակցեց «Գերցենյան ընթերցումներ. հոգեբանական հետազոտությունները կրթության մեջ» խորագրով երկօրյա գիտապրակտիկ կոնֆերանսին, որն առցանց և առերես ձևաչափով համախմբել էր հոգեբանության և մանկավարժության շուրջ 500 մասնակցի:

Պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը, որ կոնֆերանսին մասնակցում էր որպես կազմկոմիտեի անդամ և հիմնական զեկուցող, բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանի անունից շնորհավորեց ռուս գործընկերներին կոնֆերանսի կազմակերպման առթիվ և շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանի հետ արդյունավետ համագործակցության համար:

Պրոֆեսորն իր զեկուցման մեջ անդրադարձավ կրթության ճգնաժամի պայմաններում անձի նպատակադրմանը և կոգնիտիվ դիսոնանսի արտահայտվածությանը:

Դեռևս 1700-ական թվականներից սկիզբ առած ճգնաժամը ժամանակակից աշխարհում առավել ակնհայտ է: Զեկուցողն անդրադարձավ ճգնաժամային խնդիրներին և նրանց պատճառներին, ուսանողների կարիերայի կառուցման ճանապարհին, բուհի ընձեռած հնարավորություններին, արագ զարգացող կրթական շուկայի հակասական փոփոխություններին և այլ խնդիրներին:

Իմ Մանկավարժականը

Ես Վարդանյան Սիրանուշն եմ: Ծնվել եմ Երևանում, տնտեսագետների ընտանիքում: Ավարտել եմ Երևանի Նորիկ Խաչատրյանի անվան N 113 միջնակարգ դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո որոշեցի կրթությունս շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ ընտրելով ծնողներիս մասնագիտական ուղին, սակայն ընդունվեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Տեխնոլոգիա և ձեռնարկություն» բաժինը. ավարտեցի նաև մագիստրատուրան:

Ընտանիք, 3 երեխա ունենալու կարգավիճակս չխոչընդոտեց, որ մագիստրատուրայի կրթական աստիճանն ավարտելուց 12 տարի անց ստանամ նոր՝ ժամանակին համահունչ մասնագիտություն: Արդեն երկրորդ անգամ ընդունվեցի մագիստրատուրա, այս անգամ ընտրելով Մաթեմատիկայի, ֆիզիկայի ու ինֆորմատիկայի ֆակուլտետի «Ինֆորմատիկա» բաժինը:

Նոր մասնագիտությունս, թեև օտար, բայց ինձ համար դարձավ հարազատ, հետաքրքրություններով ու բացահայտումներով լի մի աշխարհ: Մագիստրատուրայի ուսումնառության ընթացքում աշխատանքի անցա հարազատ դպրոցում՝ որպես տեխնոլոգիայի ուսուցչուհի, որտեղ և արդեն 13 տարի աշխատում եմ մեծ սիրով և հպարտությամբ՝ սովորողներին փոխանցելով սիրելի համալսարանում ձեռք բերած մասնագիտական գիտելիքներս:

Թեև ուսումնական տարին նոր է սկսվել, արդեն հասցրել եմ սիրել իմ նոր մասնագիտությունը, մեր ամբիոնի դասախոսներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել մեզ, ծանոթացնելով ինֆորմատիկայի՝ժամանակակից առանձնահատկություններին: Կարծում եմ ստացածս գիտելիքների հիման վրա կկարողանամ աշխատանքս շարունակել նաև որպես ինֆորմատիկայի ուսուցչուհի:

Լիովին գիտակցելով մանկավարժի պատվաբեր առաքելությունը՝ փորձում եմ ամենօրյա աշխատանքս դարձնել ապրելակերպ՝ ողջ սերս ու նվիրումս փոխանցելով սերունդներին. այն, ինչ պատգամել է ինձ հարազատ դարձած բարձրագույն կրթօջախս՝ իմ Մանկավարժականը:

Սիրանուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի ու ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկայի բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ավելի մոտ դպրոցին և հայրենիքին

Մշտապես կարևորելով ուսանողների համար մանկավարժական պրակտիկաների արժեքը, շարունակաբար իրականացնում ենք արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են բուհ-դպրոց, դասախոս-ուսուցիչ, պրակտիկանտ-աշակերտ կապերի և համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը:

Առաջնորդվելով մեկ նպատակի և գաղափարի շուրջ միավորվելու, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու և գործունեություն ծավալելու սկզբունքներով, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի մագիստրոսները և ուսանողները մեր առաջնորդությամբ կազմակերպում և մեծ հաջողությամբ իրականացնում են ուսումնական, կրթադաստիարակչական տարաբնույթ միջոցառումներ:

Այս աշնանային արձակուրդները ևս մեր ուսանողների և պրակտիկանտների համար առավել խիտ և հագեցած գրաֆիկով անցան: Եթե շատ համառոտ ներկայացնենք՝ համագործակցեցինք Երևանի տարբեր դպրոցների աշխարհագրության ուսուցիչների, բազմաթիվ աշակերտների, տարբեր կազմակերպությունների, ծնողների և մանկավարժների հետ: Նախապես մշակված թիմային աշխատանքային պլանի համաձայն՝ կազմակերպեցինք արտադպրոցական մի շարք միջոցառումներ Հայաստանի տարբեր մարզերում: Երթուղիները շատ հետաքրքիր էին՝ 1. Երևան-Գեղարքունիք-Տավուշ, 2. Երևան-Գառնի սեյսմիկ կայան-Քարերի սիմֆոնիա բնության հուշարձան -Գառնու հեթանոսական տաճար, 3. Երևան-Արագածոտն-Շիրակ (Արթիկ, Հառիճ, Արագածի լեռնալանջին անտառապատում, Ապարան-Երևան):

Նպատակաուղղված թիմային աշխատանքի, գրագետ լոգիստիկայի և ամենակարևորը՝ մեր գործին հավատալու և սիրո շնորհիվ հնարավոր եղավ իրականացնել բոլոր էքսկուրսիաները:

Շնորհակալ ենք մեր բուհի, ֆակուլտետի ղեկավարությանը՝ մշտապես մեզ աջակցելու, հնարավորություններ ընձեռելու համար:

Ավելի մոտ դպրոցին և հայրենիքին՝ սա է մանկավարժ աշխարհագետների գլխավոր մոտիվացիան:

Վարդուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՄՀ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

Իր գործի նվիրյալը. Արմեն Ագուլյան

Կյանքից հեռացել է ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Արմեն Ագուլյանը: Երկար տարիներ նա կրթել է սերունդներին, իր մասնագիտական գիտելիքները փոխանցել ապագա մանկավարժներին:

Արմեն Ագուլյանը վայելում էր ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը: Սկզբունքային, հմուտ ու փորձառու դասախոս էր: Այդ փորձառությամբ էլ անմնացորդ տալիս էր իր գիտելիքները, ջանում, որ ուսանողները հնարավորինս բարձր գիտելիքներ ստանան և դպրոց մտնեն պատրաստված:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ ամենօրյա շփումներում նա լավ ընկեր էր, բարյացակամ գործընկեր, ուսանողների համար՝ լավի ու բարու օրինակ:

Սիրում էր իր ընտրած մասնագիտությունը, այդ սիրով ու հավատով էլ մինչև կյանքի վերջը նվիրվեց իր սուրբ գործին, հավատարիմ մնաց որդեգրած սկզբունքներին:

Գործընկերները Արմեն Ագուլյանին հիշում են որպես բարձր պրոֆեսիոնալիզմով առանձնացող դասախոսի, կենսասեր ու լավատես մարդու:

Լավ դասախոսի և գործընկերոջ մահը ցավալի կորուստ է բուհի համար: Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ցավակցում են Արմեն Ագուլյանի ընտանիքին:

Նրա հիշատակը վառ կմնա ուսանողների և գործընկերների, բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Կենսաբաբության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի բնապահպանության հանձնաժողովը կազմակերպել էր սեմինար-քննարկում՝ «էկոլոգիական հիմնախնդիրներ» թեմայով: Մասնակցում էին առաջին, երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողները: Հանձնաժողովի կազմակերպած սեմինարի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներին, դրանց առաջացման գլխավոր պատճառներին, բնության պահպանմանն ուղղված գլխավոր քայլերին և միջոցներին:

Սեմինարի ընթացքում քննարկվեց անթրոպոգեն կամ մարդածին գործոնների ազդեցությունը բնության վրա: Ծավալվեց գործնական խոսակցություն Համաշխարհային օվկիանոսի աղտոտման, քաղցրահամ ջրերի որակի վատթարացման, կենսաբանական տեսակների բազմազանության հիմնախնդիրների, երկրագնդի մթնոլորտի աղտոտման և օզոնի շերտի քայքայման, երկրագնդի անտառազրկման, հողերի անապատեցման, ՀՀ-ում առկա արգելավայրերի, բուսական-կենդանական աշխարհի, արգելավայրերի և ոչ միայն բնության պահպանման քայլերի ու միջոցների մասին:

Սեմինար-քննարկմանը մասնակցեց նաև Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը ով խոսեց Սևանա լճի հիմնախնդիրների, մարդկանց ազդեցության և դրանց հետևանքների մասին:

Քննարկման ընթացքում ուսանողները ծանոթացան էկոլոգիական մի շարք գլոբալ հիմնախնդիրների, ավելացրին իրենց բազային գիտելիքները, արտահայտեցին իրենց կարծիքներն ու տեսակետները: Իսկ ամփոփելիս եկան այն եզրահանգման, որ մարդու անմիջական գործունեության արդյունքում բնությունը կրում է մեծ վնասներ և զրկանքներ:

Աստղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թե ինչպես վրացիները «յուրացրեցին» Խաչատուր Աբովյանին

Փարիզաբնակ հայ քանդակագործ Անդրեաս Տեր-Մարուքյանի հեղինակած Խաչատուր Աբովյանի արձանի ստեղծման պատմությունը հայտնի է: Մեծ լուսավորչի հիշատակը հավերժացնելու ցանկությունը 1909-ին սկիզբ դրեց համաժողովրդական հանգանակության, հայտարարվեց մրցույթ, և գործը վստահվեց Տեր-Մարուքյանին, որը ձեռնամուխ եղավ Աբովյանի կերպարի ստեղծմանը: 1913 թվականին քանդակն արդեն պատրաստ էր: Սակայն ծագեցին ֆինանսական դժվարություններ, այնուհետև վախճանվեց հեղինակը, և ավելի քան տասը տարի արձանը մնացել էր ձուլարանի նկուղում:

1924 թվականին ձուլարանը վերջնագիր ներկայացրեց. կամ վճարում եք պակասող գումարը (խոսքը 10 հազար ֆրանկի մասին էր), կամ արձանը ոչնչացնում ենք՝ այլ նպատակով մետաղն օգտագործելու համար: Պահանջը սթափեցնող էր: Գտնվեցին նախանձախնդիր մարդիկ, որոնք ահազանգ հնչեցրին, նրանց ձայնը հասավ մինչև Երևան, և Հայաստանի իշխանությունները, ֆրանսահայերի համար շատ անսպասելի, ոչ միայն արձագանքեցին, այլև տրամադրեցին անհրաժեշտ գումարը:

Խաչատուր Աբովյանն «ազատագրվել էր»: Եկել էր հայրենիք վերադառնալու ժամանակը: Փարիզում որոշում կայացվեց խոշոր մի արկղի մեջ տեղադրված արձանը նախ ուղարկել Ստամբուլ, որտեղից էլ

նավով պիտի ուղևորվեր մինչև Բաթում:

Աբովյանի արձանը ճանապարհ ընկավ: Անցավ որոշ ժամանակ: Ոչ մի լուր չկար: Դարձյալ սպասեցին: Արդեն երեքչորս ամիս էր, ինչ այն գնում էր դեպի Հայաստան, բայց Հայաստանում ոչ ոք չգիտեր դրա գտնվելու վայրը: Բոլոր կարգի հարցումներն ունեին մեկ պատասխան. Ստամբուլում ստացել ու ճիշտ ժամանակին կազմակերպել էին առաքումը: Հետո բոլոր հետքերը հանկարծ կորչում էին:

Կես տարին բոլորեց: Խաչատուր Աբովյանի արձանն անհետացել էր: Ֆրանսահայերի և ընդհանրապես սփյուռքի մեր հայրենակիցների շրջանում արդեն ծայր էին առել անհանգստությունը, կասկածները, զանազան դժգոհ խոսակցություններ: Տարարտեսակ վարկածներ էին շրջանառվում, և այդ մտահոգություններին վերջ տալու համար ի վերջո Եվրոպայի հայկական գաղութի ներկայացուցիչ, երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը ուղևորվեց Թիֆլիս՝ տեղում հայ պաշտոնյաների հետ պարզելու, թե ինչ է կատարվել:

Տեղ հասնելուն պես Պատմագրյանին հաջողվում է տեսակցել Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինի հետ: Արձանի կորստի լուրը Լուկաշինի համար անսպասելի էր, և նա խոստանում է շատ կարճ ժամանակի ընթացքում պարզել այդ հարցը: 4-5 օր անց նա իսկապես իր խոստումը կատարեց: Այն, ինչ հաջողվել էր իմանալ, և ուրախալի էր, և միևնույն ժամանակ զավեշտալի:

Իսկ պատահել էր հետևյալը: Մինչև Ստամբուլից նավը լողում էր դեպի Բաթում, նավում գտնվող թանկագին բեռի փաստաթղթերն այդ ընթացքում գնում են դեպի Երևան: Տեղ հասած անհասցե բեռը Բաթումի մաքսատանը մնում է մի քանի ամիս, բայց այդպես էլ ոչ ոք չի գալիս այն ստանալու: Տեսնելով, որ խորհրդավոր արկղը ոչ մեկին պետք չէ, մաքսատան վարչությունը որոշում է այն բացել և տեսնել, թե ինչ է ներսում: Բացում են: Գեղեցիկ քանդակն իսկապես տպավորիչ էր: Եվ ահա հենց տեղում էլ որոշում են, որ սա այլ բան չի կարող լինել, քան որևէ հայտնի հեղափոխականի քանդակը, որը Ֆրանսիայի պրոլետարիատի նվերն է հեղափոխական Բաթում քաղաքին: Թե հատկապես ում արձանն էր դա, այս դեպքում կարևոր չէր: Կարևորն այն է, որ այդ մարդը հաստատ պայքարում էր միջազգային իմպերիալիզմի դեմ: Եվ քանի որ դա հաստատ այդպես պիտի լիներ, քանի որ այդպես էր հուշում բոլշևիկյան տրամաբանությունը, անմիջապես որոշում է կայացվում արձանը տեղադրել Բաթում քաղաքի կենտրոնում: Թող քաղաքացիներն իրենք կռահեն, թե բրոնզածույլ տղամարդը ինչ ազգության ներկայացուցիչ է, ու ինչ պատգամներ է իրենց հղում:

Այն, որ հայտնվեցին հայերը և սառը ջուր լցրեցին վրացական երազանքի վրա, պիտի որ ծանր հիասթափությունների պատճառ դառնար: Ամեն դեպքում կարճ ժամանակում նույն Լուկաշինի վերահսկողությամբ Աբովյանի արձանը վրացիներից «առգրավում են» և առաքում Երևան: Մնացյալն արդեն հայտնի է:

Երկար դեգերումներից, անընդհատ մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելուց հետո վերջապես 1964 թվականին արձանը գտնում է իր հիմնական հանգրվանը՝ Քանաքեռում, Խաչատուր Աբովյանի տունթանգարանի բակում, ուր կանգնած է առայսօր:

Հովիկ ՉԱՐԽՉՅԱՆ

Թարգմանչաց տոն.

Հայկ և Բելից մինչև Սասունցի Դավիթ, Վանից մինչև Երևան

Հոկտեմբերին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տրվեց XXXVI (2023—2024 թթ.) ուսումնական տարվա մեկնարկը:

Հավատարիմ մնալով իր ավանդույթներին, այս տարի ևս հոկտեմբերյան յուրաքանչյուր կիրակնօրյա բաց դաս նվիրվել է հայ ժողովրդի պատմական անցյալի դրվագներին: Ուշագրավ է, որ այս տարի աշակերտներն իրենց ծնողների հետ միասին ներկայացրին զեկուցումներ՝ նվիրված քրիստոնեության ընդունմանն ու Թարգմանչաց տոնին, աշնանային Բերքահավաքի տոնին, հայկական մայրաքաղաքներին և Երևանի 2805-ամյակին, հայ ժողովրդի «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Վահագնի ծնունդը» առասպելներին: Բաց դասերը եզրափակվեց «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսով, որը հայ ժողովրդի կենցաղի, բարքերի, աշխարհայացքի հանրագիտարանն է, առաջին անգամ գրի է առնվել 1873 թվականին (150-ամյակը լրանում է այս տարի) բանասեր Գարեգին Սրվանձտյանի կողմից:

Հետաքրքրական է, որ Թարգմանչաց տոնին նվիրված դասի շրջանակներում Ամարաս վանական կրթահամալիրի պատմությունը ներկայացրեց այնտեղ իրենց ծառայությունն

անցկացրած վանականների հետնորդ Վիոլետա Տեր-Գրիգորյանցը, ով գտնվելով Մոսկվայում, իր դստեր հետ արդեն 4-րդ տարին է հաճախում է «Վերածնունդ» դպրոց: Վերջինս պատմեց պարբերաբար քանդված և նորից վերականգնված վանական համալիրի մասին, ապա հույս հայտնեց, որ պատմությունը կկրկնվի և համալիրը կմնա կանգուն, քանի որ դա հայ ժողովրդի պատմական սրբություններից է:

Խոսվեց նաև Մեսրոպ Մաշտոցի և իր աշակերտների (Կորյուն, Եզնիկ Կողբացի, Եղիշե, Ղազար Փարպեցի և այլոց) թողած ժառանգության մասին, և իհարկե, ակնարկ եղավ Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատությանը:

Աշակերտների աշխատանքները պատրաստված էին սիրով՝ ձևավորված նկարներով, պատմական դրվագներով, որոնցում նրանք օգտագործել էին ժամանակակից տեխնոլոգիաներ: Թերևս դա վկայությունն է այն բանի, որ գտնվելով պատմական հայրենիքից դուրս՝ նոր սերունդը հետաքրքրված է իր պապերի երկրով, պատրաստ է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմության էջերը, որպեսզի ավելի խորությամբ իմանա՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Հոգևոր մայրաքաղաք Էջմիածնում

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները «Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում, Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Սիմա Դայանի գլխավորությամբ իրականացրին ուսումնաճանաչողական էքսկուրսիա՝ դեպի հոգևոր մայրաքաղաք Էջմիածին:

Ուսանողներին հայտնի դարձավ, որ Վաղարշապատի տարածքի և նրա շրջակայքի մասին առաջին գրավոր տեղեկությունները հայտնել է Վանի թագավոր Ռուսա Բ-ն, ապա՝ պատմիչ Ագաթանգեղոսը: Ըստ Մովսես Խորենացու, մինչև Վաղարշապատ կոչվելը, քաղաքն անվանվել է Վարդգեսավան, իսկ ավելի վաղ՝ Արտիմեդ: Էջմիածինը Վաղարշապատ է անվանվել 1920 թ.-ին, իսկ 1945թ.-ին կրկին վերանվանվել է Էջմիածին: 1996 թ.-ից կրկին գործածության մեջ է դրվել Վաղարշապատ անունը:

Ուսումնաճանաչողական էքսկուրսիայի ընթացքում ուսանողներն այցելեցին Էջմիածնի տաճար՝ Մայր Աթոռ, որը Հայ առաքելական եկեղեցու գլխավոր տաճարն է: 5-րդ դարի հայ պատմիչների վկայությամբ առաջին քրիստոնյա եկեղեցիները հիմնադրվել են հեթանոսական մեհյանների տեղում: Մայր Տաճարը հիմնադրվել է հեթանոսական Արտեմիս աստվածուհուն նվիրված մեհյանի տեղում, որը, համաձայն Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, ոսկե մուրճով հարվածելով, մատնացույց է արել երկիր իջած Աստծու Միածին որդին:

Ուսանողները ծանոթացան հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության հուշարձաններից 618 թ.-ին կառուցված Սուրբ Հռիփսիմեի տաճարին, 630 թ.-ին կառուցված Սուրբ Նահատակ Գայանեի, ապա Սուրբ Շողակաթ Սուրբ Մարիամ եկեղեցիներին:

Վաղարշապատից 3 կմ հարավ-արևելք ուղղության վրա է գտնվում «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանը, որը 1989 թվականին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում: Տաճարը «Զվարթնոց» է անվանել պատմիչ Սեբեոսը: Այն կառուցվել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի օրոք՝ 643–652 թթ.-ին: Ենթադրվում է, որ տարածքում է եղել Տիր աստծու հեթանոսական մեհյանը:

Ուսանողներից յուրաքանչյուրը այսպես ներկայացրեց միջնադարյան Հայաստանի հոգևոր մշակութային օջախները, հաճախ բանավոր խոսքը համեմելով հայկական երգի գոհարներով:

Վառ տպավորություններով ավարտվեց հերթական հայրենաճանաչողական էքսկուրսիան, որը դարձավ գիտելիքների ձեռքբերման և հաճելին ու օգտակարը համատեղելու նոր հնարավորություն:

Աստղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցե՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ